

Երիխ Ֆրոմի հեղինակած գրքերը
Սիրելու արվեստը
Պատրանքի շղթաներից այն կողմ
Քրիստոսի դոգման
Փախուստ ազատությունից
Մոռացված լեզուն
Մարդն ինքն իր համար
«Մարդ» հասկացությունն ըստ Մարքսի
Կարո՞ղ է մարդը գերիշխել
Հոգեվերլուծություն և կրոն
Առողջ հասարակություն
Չիզմունդ Ֆրոյդի առաքելությունը
Սոցիալիստական հումանիզմ
Կլինեք աստվածների պես
Ձե՛ն բուդդայականություն և հոգեվերլուծություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



Ներածություն	9
Նախաբան	19
I. ՍԵՐՆ ԱՐԿԵՊՍԵ Է	23
II. ՍԻՐՈ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	30
1. Սեր՝ մարդու գոյության խնդրի պատասխանը	30
2. Սերը ծնողի և զավակի միջև	67
3. Սիրո առարկաները	76
Եղբայրական սեր	77
Մայրական սեր	80
Էրոտիկ սեր	84
Անձնասիրություն	90
Սեր առ Աստված	97
III. ՍԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԿԱԶՄԱԼՈՒԹՅՈՒՄԸ	
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԵՎՍՏՅԱՆ	
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ	120
IV. ՍԻՐՈ ԳՈՐԾԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ	149

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



Արդեն հիսուն տարի է, ինչ ունենք «Սիրելու արվեստը» այս փոքրիկ խորաթափանց գրքի, աջակցությունն ու ոգեշնչումը: Ժամանակի ինչպիսի՞ արտասովոր ընթացք: Հոգեբանությունն այնքան փոփոխություններ է կրել այս տասնամյակների ընթացքում: Ֆրոյդը մտել և դուրս է եկել Նորածնությունից: Հոգեթերապիայի տարբեր տեսակներ ծաղկել ու չքացել են: Դեղամիջոցները վերասահմանել են հույզի (եմոցիայի) մեր ընկալումը, դրանք Նույնպես առկայծում և հետո խամրում են: Այդ ամբողջ ընթացքում մեզ հետ է եղել Ֆրոմի այս բարակ գիրքը՝ իր հանդարտեցնող խորհուրդներով: Ի՞նչն է գրքին տևականություն հաղորդում:

Թեման, իհարկե, մեծ դեր ունի: Մենք, ինչպես ասում է Ֆրոմը, ծարավ ենք սիրո: Մերը բնորոշում է մեզ, այն «մարդու գոյության խնդրի պատասխանն է»: Միևնույն ժամանակ, ամեն տարի սիրո մասին բազմաթիվ գրքեր են լույս տեսնում: Դրանցից ոչ մեկը չի թարգմանվում երեսունհինգ լեզուներով, ինչպես Ֆրոմինն է թարգմանվել:

Անկասկած, վերնագիրն էլ է օգնում: Սրա համար չի գործածվում առևտրական մշակույթի լեզուն՝ գովազդային ամպագոռոռ արտահայտությունները: Իր դիպուկությամբ

վերնագիրը գրքի դասական դառնալու ապագայի հա վակնություններ է ներկայացնում: Ֆրոմը չի թաքնվում իր մասնագիտության հետևում. «հոգեվերլուծություն սիրո արվեստում» չի առաջարկում: Նա համարձակ է: Անմիջական շփման մեջ է մտնում ընթերցողի հետ:

Եվ հետո՝ լեզուն: Այն ի կատար է ածում վերնագրի խոստումը: Ֆրոմն ուղիղ ասում է. «Սերն արվե՞ստ է: Ուրեմն այն գիտելիք ու ջանք է պահանջում»: Կարելի է համարել, որ համառոտ խոսքի մեջ պոեզիա կա. «Առանց սիրո, մարդկությունը մեկ օր էլ չէր գոյատևի»: Բազ վաղեպե՛ մանրախնդիր, շահադիտական մշակույթը խիստ քննադատության ենթարկելիս, Ֆրոմը դիմում է փո խաբերությունների. «Աշխարհը մեր փխորժակի խոշոր առարկա է, մի մեծ խնձոր, մի մեծ շիշ, մեծ կուրծք. մենք ծծկերներ ենք, հավետ ակնկալող, հուսացող և հավետ հիասթափված»:

Այդ դիտարկումը մատնանշում է մի կարևոր պատճառ, թե ինչու է Ֆրոմը կարողանում խոսել յուրաքանչյուր Նոր սերնդի հետ: Նա կանխագիտակ է եղել: Սահմանել է մեր կյանքի առանցքային մարտահրավերը: Եթե մշակույթը պարզևատրում է նարզիզությունը (ինքնահիացումը), ու րեմն ինչպե՞ս գերազանցենք (տրանսցենդենտացնենք) մեր սեփական անձը: Եթե մշակույթն օտարացնող է, ուրեմն ինչպե՞ս գտնենք այն, ինչը տեսչում ենք՝ մտերմություն, կիրք, ներդաշնակություն, ինչը Ֆրոմը անվանում է «վե րամիավորում սիրո միջոցով»:

Ժամանակի ընթացքում այս հարցերն ավելի հրա տապ են դարձել: Կաճառականությունը բացահայտ արա տավորում է անձնականը: Բաշողակ տղամարդիկ «վար կանիշային» («տիկնիկ»՝ երիտասարդ և գեղեցիկ) կին

են փնտրում: Ամուսնությունների գրեթե կեսն ավարտվում է ամուսնալուծությամբ՝ մասամբ «ավելի շահավետ գործարքով» գայթակղվելու պատճառով, ասես յուրաքանչյուր անձ հատուկ սահմանված արժեք ունի, երիտասարդության, գեղեցկության, խելացիության, կարգավիճակի և (հատկապես) հարստության որոշակի հաշվարկելի ամբողջություն է: Բավականին հաճախ այս վերախմբավորումների արդյունքը ամուսնություններն են, որտեղ դատարկության զգացողություն է առաջանում: Սա կյանքի մի իրավիճակ է, որ Ֆրոմը հասկանում էր:

Ֆրոմի քննադատ միտքը ձևավորվել է վաղ տարիքից: Ճնվել է 1900 թվականին, հրեական ավանդապաշտ ընտանիքում, Ֆրանկֆուրտում: Ֆրոմի հայրական կողմի պապը և երկու նախապապերը ականավոր ռաբբիներ էին: Ֆրոմի հայրը՝ գինու վաճառականը, ամաչում էր իր զբաղմունքից: Չիշելով իր կյանքի վաղ տարիները՝ Ֆրոմն ասում էր. «Երեխա ժամանակ ինձ շատ էր զարմացնում, որ մարդիկ իրենց կյանքը նվիրում են փող աշխատելուն, և չփոթվում էի, երբ իմ ներկայությամբ մարդը խոստովանում էր, թե գործարար է»: Երբ Ֆրոմը տասներկու տարեկան էր, հոր աշխատողներից մեկը նրա մեջ հետաքրքրություն բորբոքեց սոցիալիզմի հանդեպ: Ֆրոմի կրոնական ուսուցումը նրան առաջադեմ գաղափարներ տվեց՝ միտք, որ մարգարեն, խոսքերից բացի, պետք է իրեն արտահայտի նաև գործով՝ բավարարելով մարդկանց առօրյա կարիքները: Բայց Ֆրոմը իրեն երբեք լիովին հարմարավետ չի զգացել ավանդապաշտ համայնքում: Քսաներեք տարեկանում նա հայտարարեց սիոնիզմին դեմ լինելու մասին՝ հիմնավորելով, որ ազգայնականությունը հակասում է լիակատար մարդասիրությանը: Քսանվեց տարեկանում, ի նշան ծիսա